Արմավիրի Մ. Սիլիկյանի անվան N6 հիմնական դպրոց

Նախագծային աշխատանքի հաշվետվություն

Առարկա՝ մաթեմատիկա

Թեմա՝ Մաթեմատիկան ամենուր է

Ղեկավար՝ Ա. Զաքարյան

Մասնակիցներ՝ VIIբ դասարանի աշակերտներ

1.11.23թ-29.11.23թ-ին VIIբ դասարանի աշակերտներ Ալեն Կարապետյանը, Սոֆի Մխիթարյանը, Սեդա Բրոյանը, Վլադիմիր Աղաջանյանը, Սոնա Հովհաննիսյանը, Ալեքս Հովհաննիսյանը,Թագուհի Աբելյանը, Մարիանա Դանիելյանը և Մելինե Սարգսյանը իրականացրեցին նախագծային աշխատանք մաթեմատիկա առարկայից <<Մաթեմատիկան ամենուր է>> թեմայով: Նախագծային աշխատանքի տևողությունը 5 շաբաթ, հանդիպումները՝ յուրաքանչյուր չորեքշաբթի 8-րդ ժամին:

Նախագծի տեսակը՝ վերառարկայական:

Հետազոտության հիմնախնդիրը՝ մաթեմատիկայի անհրաժեշտությունը և կապը մարդու գործունեության ոլորտների և մասնագիտությունների հետ:

Նախագծային աշխատանքը կատարվել է հետևյալ փուլերով՝

1. *Նախագծային աշխատանք իրականացնողների ընտրում,դերերի բաշխում*
2. *Նախագծային աշխատանքի տեսական մասի կատարում/ համացանց, գրադարան, խորհրդատվություն*
3. *Աշխատանքների իրականացում*
4. *Վերջնական արդյունքի ստեղծում*
5. *Ավարտուն նախագծերի արդյունքների ներկայացում*

Սովորողների ինքնուրույն հետազոտական գործունեություն

Աշակերտները ուսումնասիրել են գրականություն մաթեմատիկայի և մաթեմատիկոսների մասին: Հետազոտական աշխատանք՝ տարբեր մասնագիտությունների տեր մարդկանց հետ, պարզել են մաթեմատիկայի կարևորությունը նրանց մասնագիտության մեջ:

Նախագծի վերջնարդյունքների ներկայացման տեսակներ սահիկաշար և գիրք:

Աշակերտների մոտ ձևավորվեցին հետևյալ **կարողունակությունները** և **հմտությունները**

- Կատարում են հետազոտություն, օգտագործում են տարբեր որոնողական համակարգեր:
- Ներկայացնում են մաթեմատիկայի կարևորությունը գիտության տարբեր բնագավառներում և մասնագիտություններում:
- Կարողանում են առօրյա կյանքում մաթեմատիկայի կիրառության օրինակներ բերել:
- Կարողանում են ներկայացնել աշխատանքի արդյունքները սահիկաշարի միջոցով:
- Աշխատում են տեքստային խմբագրիչներով:

Նախագծի վերջնարդյունքները՝

1. բացատրեցին գիտելիքի կարևորությունը, դրսևորեցին կամք և վստահություն սեփական ուժերի նկատմամբ
2. վերլուծեցին, գնահատեցին և ներկայացրեցին անհրաժեշտ տվյալներ
3. գտան և օգտագործեցին տեղեկույթ տարբեր աղբյուրներից
4. դրսևորեցին հետազոտելու, փորձարկելու, տարբեր գործիքակազմեր համադրելու կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն մշակեցին և իրականացրեցին նախագիծ

Գնահատում՝ ընդհանուր՝ 20 միավոր

- Ընթացքը – 6 միավոր, ընդ որում՝

● նախապատրաստական փուլ (թեմայի ընտրություն, նպատակի սահմանում) - 1 միավոր

● բուն ընթացք (խնդիրների ձևակերպում, հարցերի մշակում, պլանի կազմում, ժամանակի բաշխում, ռազմավարությունների ընտրություն, աղբյուրների ուսումնասիրում, տեղեկության հավաքագրում և վերլուծություն) - 4 միավոր

● ավարտ կամ ամփոփում (վերջնական մշակում, աշխատանքի ձևավորում) - 1 միավոր

- Բովանդակությունը – 8 միավոր, ընդ որում՝

● համապատասխանությունը թեմային - 3 միավոր

● ամբողջականությունը - 2 միավոր

● հիմնավորվածությունը - 2 միավոր

● գրագիտությունը - 1 միավոր

- Ներկայացումը – 6 միավոր, ընդ որում՝

- ձևը/միջոցը (սահիկաշար, գրքույկ) - 3 միավոր
- խոսքը - 3 միավոր

Ալեն Կարապետյանը -20, Սոֆի Մխիթարյանը -18, Սեդա Բրոյանը-10 , Վլադիմիր Աղաջանյանը-18, Սոնա Հովհաննիսյանը -20, Ալեքս Հովհաննիսյանը -8, Թագուհի Աբելյանը-10 , Մարիանա Դանիելյանը-9, Մելինե Սարգսյանը-8: